ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 427-Ա **20 հուլիսի 2026 թ.**

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՐՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԽՄԲԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Գեղարքունիքի մարզում անտառային և խոտածածկ տարածքների հնարավոր հրդեհավտանգ իրավիճակների, մշտադիտարկման, հրդեհների կանխարգելման, անհրաժեշտ կարողությունների գնահատման, արագ արձագանքման, հրդեհների դեմ պայքարի, դրանց տարածման կանխման, ինչպես նաև դրանց հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումներն իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ /այսուհետ՝ Աշխատանքային խումբ/:
2. Հաստատել Աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Աշխատանքային խմբին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Գեղարքունիքի մարզի անտառածածկ և խոտածածկ տարածքներում իրականացնել ուսումնասիրություններ և կանխարգելիչ աշխատանքներ:
4. Աշխատանքային խմբի անդամներին՝ մեկշաբաթյա պարբերականությամբ՝ յուրաքանչյուր հինգշաբթի, Աշխատանքային խմբի ղեկավարին ներկայացնել տեղեկատվություն ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված խնդիրների, դրանց լուծման համար ձեռնարկված միջոցառումների և կատարված աշխատանքների վերաբերյալ:
5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ ամփոփել Աշխատանքային խմբի անդամներից ստացված տեղեկատվությունը և ներկայացնել Հայաստանի

Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչություն:

20.07.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝
ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ.

ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2026 թվականի հուլիսի 20 - ի
N 427-Ա որոշման

ԿԱԶՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Ջանիկ Բազեյան	- Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, խմբի ղեկավար
Հակոբյան Գարեգին	- Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ /համաձայնությամբ/
Պողոս Մարտիրոսյան	- Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչության Սևան տեղամասի պետ
Աղասի Խաչատրյան	- Պարեկային ծառայության Գեղարքունիքի մարզի գումարտակի հրամանատար
Վազգեն Սահակյան	- «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Ճամբարակի Անտառտնտեսության» մասնաճյուղի տնօրեն
Արայիկ Հունանյան	- «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտական գիտահետազոտությունների և կադաստրի վարման բաժնի ղեկավար
Հարությունյան Վանիկ	- Մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ
Էդգար Գևորգյան	- Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
Գրիգոր Դաշտոյան	- Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
Արթուր Մարգարյան	- Սևան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
Արմեն Շահինյան	- Մարտունի համայնքի ղեկավարի տեղակալ
Ռոբերտ Օհանյան	- Ճամբարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Կարեն Մկրտչյան - Վարդենիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2026-07-20 15:46:50 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
08428824

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ